

Նեակներից բաղկացած բնակարանները: Ծյնպէս որ ազգագրական տեսակէտից չարժէ երկար կանդ առնել սրանց վրայ, միայն գաւառի կրկտուրայի մասին տեղեկութիւն տալու համար կասեմ, որ քաղաքի և մանաւանդ հաճիքենդին մօտիկ զիւղերում, ինչպէս են Մոռլթ, Ազատ և ազն, որոնք նոյնպէս իբր ամարանոց են ծառայում, արդէն դարադամները վերանում են և կան 2—4 սենեակներից բաղկացած մաքուր և բաւական գեղեցիկ տներ. իսկ այս կենդրոններից աւելի հեռու գիւղերում, ինչպէս են Փիփ, Ղարադաղլու և ազն, ուր համեմատաբար քաղաքակրթութիւնը աւելի քիչ է թափանցել, դեռ ևս մեծ մասամբ դարադամներ են: Միայն պէտք է ասել, որ ամբողջ գաւառում աշխատ այլևս դարադամ չեն կառուցանում, այլ՝ չքաղաքակրթուած տեղերում վերանորոգում և պահպանում են, իսկ փոքր ինչ քաղաքակրթուածներում քանդում և նոր ձեկինն են կառուցանում և կտուրները կղմինտրով ծածկում:

Կահաւորութիւնը ասիականի և եւրոպականի խառնուրդ է. կան աթոռներ, սեղան, բաց կայ և գուշակ՝ կապերտներ և ներքնակներ ձգուած գետնին, որոնց վրայ նստում են ծալապատիկ:

Քաղաքում տների մեծագոյն մասը աղիսաաշէն է, մեծ մասամբ մի և երկու յարկանի: Ընդհանրապէս արտաքինի վրայ շատ քիչ ուշադրութիւն է դարձուած. նոյն իսկ ամենալաւ փողոցի վրայ գտնուած ահագին տները, արտաքուստ ոչ մի դարդարանք, ոչ մի գեղեցկութիւն չունին: Ներքուստ էլ այնքան յարմարութիւններ չեն ներկայացնուած:

Կահաւորուած են մասամբ եւրոպական և մասամբ ասիական ձևով, իսկ մի քանի տներում կան նաև եւրոպական բաւական լաւ կահ կարասիք և թանգագին գորգեր.

## Զ Գ Ե Ս Տ Ե Ւ Զ Ա Ր Դ

### I. Կ Ա Բ Ա Բ Ե

**Ճապիկ.**—կարում են կարմիր շիլաբակից կամ կարմիր ալլշից, որի արշինը արժէ մօտ 20 կոպէկ: Իշնում է մինչև ոտները: Կուրծքը մէջտեղից բացուած է, և եղրերին սև բաշ (երիզ) կարած: Աղրծքի մասը կրկնակի է լինում, և կամ աւելի հասարակ կտորից աստառձգած, որ աւելի տաք պահէ: Թևերը միջակ լայնութեան են, և հասնում մինչև ձեւքի կոճիկները: Կոճակներ չունին, այլ վեր են քըշտում, մանաւանդ գործ անելիս:

**Փոխան.**—կարում են շիլաբակից, միտկակից, շիլայից և այլն:



**¶ w n d w l b g h**

Հագնում են շապկի տակից և բարձր կապում։ Փողքերը երկար են, նեղ և վերջանում են բարձր, որ 2—3 վերշոկ լացնութեան սև մահուդ է լինում, երբեմն էլ թաւշեաց կամ մետաքսեաց կտոր, իսկ սրանից վերև նեղ ասեղնագործ երկից՝ նաշխը. երևացող մասը միայն այս քողը և նաշխն են լինում։

Մրխալուդ. —Կարում են զանազան գոյնի յթերից, մովից և աչլ կտորներից։ Մէջքի վերաց բեւշոյդ սեղմուելով՝ արխալուդը լինում է մինչև ծնկները։ Կուրճքը եռանկիւնաձև բացուած է։ Երխալուդը հագնում են շապկի վրացից, տաք ժամանակ միայն մէկ հատ, իսկ ցուրտ միջոցին՝ 2, 3, 4 և մինչև անգամ հինգ։ Ըռաջին արխալուդը կոչում է ուն որեւշաւ և աւելի հասարակ է լինում, թևքերը հասնում են մինչև մատները և վերջանում հօտու—ժապաւէնով։ Միւսները կոչում են զիլի (վերացի) արխալուդ, և աւելի լաւ կտորից են կարուած լինում, բողոր եղբները կարուած են լինում հօտու—ժապաւէն։ Թևքերը երկար են լինում և հէնց կռան տակից բացուած, իսկ արմունկի մօտից դայթանով միացած, թևքերը ծացրերը եռանկիւնաձև կտրուած։ Այս թևքերի ծացին, կռնից մինչև ծացը՝ մի արծաթէ շղթաց է կարուած, որի վրացից կամ դրամներ և կամ նշաձև դիւկմաններ են կախուած։ Սովորաբար թևքերը չեն հագնում, այ կախ են ձգում։

Ըռաջին արխալուդի վրացից կապում նն գոտի, որ կարմիր յթից կէս մետր լայնութեան և 3 մետր երկայնութեան կտոր է։ Գոտին երկու անգամ փաթաթում են մէջքին, յետոյ առջևում մի հանգոց ձգում և ապա ծացերը «նի են քաղում» գոտու մէջ։

Քիւլանա. —Կարում են շալից, կամ մովից, բամբակած. մէջքին բուզմայով փոքր ինչ սեղմուելով հասնում է մինչև ծնկները. կուրճքը եռանկիւնաձև բաց է, թևքերը հասնում են մինչև արմունկը այնպէս որ ամբողջ ծղիկը բաց է մնում. Քիւլանայի բոլոր եղբերը պատռմ են աղուէսի կամ աւելի թանգաղին մորթով։

Դիլիսի յարդարանեֆ. —Նախ մազերը սանրում են, յետոյ ուղիղ մէջ տեղից երկուսի բաժանում, առանձին առանձին ոլորում, երկուսն էլ կծում, այցպէս պահում, և մի եռանկիւնաձև սպիտակ շոր՝ հըշտէն կապում վերացից. Ցետոյ երկու շուռ իրար վրայ դնում և կզակի տակից տանելով՝ կապում են գագաթին։ Ղուանը շորի կտորտանք են միմեանց վրայ փաթաթուած, այնքան, որ ունենում են 5 ս. լայնութիւն, 3 ս. հաստութիւն և այնքան երկարութիւն, որ հասնում են կապողի մի քունքից մինչև միւս քունքը։ Սրա ծացրերին հաստ թել է կապած, որով և հանգուստում են. Ցետոյ երեսի երկու կողքից դնում են մի մի պոչ՝ թելից ոլորած 20 սանտիմետր երկ. և 2 սանտ.

հաստութեան թել, և ծամերը, ծայրը վերևից դնելով՝ փաթաթում վերան, յետոյ այս երկուսն էլ կծած սպասում են, և մի ճկատանոց—եռանկիւնաձև ծալուած մի շոր-ճակատի վրայով անցկացնելով՝ կապում ծոծրակի վրայ։ Յետոյ մի սպիտակ հշրանք,—եռանկիւնաձև մահուդվարի կտոր, որի երկու ծայրերին ոռու է կապած,—ձգում են գլխին, ծամերի ծայրերը տանում դէպի կզակի տակը և մշրղանին կապում, քողը մի երկու անգամ անցկացնում գլխի և կզակի վրայով և հանգուստում։ Ապա երկու դոլանների վրայ դնում են ոռու դոլանը.—սա եռանկիւնաձև, մէջտեղում 5 ս., ծայրերում հետզհետէ նեղացող, մի փայտ է 14 ս. երկարութեան, շորերի մէջ փաթաթուած և ծայրերին քող կապած,—և քողերը կապում դագաթին, քորոցով տակի դոլանը միւսների հետ ամրացնում։ Ապա դնում են շոտուոց՝ (երեսանոց.) —26 ս. երկարութեան և 14 ս. բարձրութեան եռանկիւնաձև կարմիր մահուտ է, շուրջը դալթան, իսկ երկարութեամբ գեւալութւան (կլապիտոնի ասղնեգործ մի կտոր), եզրին արծաթի թոփեր. ոմանց միքանի հատ էլ գոյնզգոյն հուլունք կարած։ Երկու եռանկիւնի երսանոցները գագաթի և ծոծրակի մասի քողերով միմեանց կպած են. իսկ երրորդ քողով կապւում են բկի տակ։

Ըրեսանոցից յետոյ կապում են ժիշտու, որ մի քառ. մեծութեան սպիտակ միտկալ է, եռանկիւնի ծալուած. սա ձգում են գլխին, աջ ծայրը կզակի տակով տանում, իսկ ձախը բերանի վերայով բերում են, և ծոծրակի մօտ երկու ծայրերը հանգուստում։ Սա ծածկում է բերանը անմիջապէս քթի տակից և ամբողջ դոլանները։ Ապա գագաթին դնում են կողին—45 ս. երկարութիւն և 10 ս. լայնութիւն ունեցող կտորի վրայ խմոր են քսում, լայնութեամբ երկուս ծալում, վերան նորից խմոր քսում և նոր մի ուրիշ, նոյն երշարութեան և միքիչ աւելի լայնութեան շոր քաշում, անցկացնում մի պուլիկի վրայ, երկու ծայրերը իրար կարում, և դնում արևի տակ չորացնում։ Յետոյ մի ասղնեգործած, հինգ սանտիմետր լայնութեան և 50 ս. երկարութեան թաւշեայ կտոր կարում կոպիկի առաջի մասում. սա էլ կոչւում է ճշկանոց, և ծայրերին ունի երկական քող, որոնցից մինը կապում են ծոծրակի վերայով, միւսը բկի տակով անցկացնելով՝ կոպիկի վրայ։

Ապա մի եռանկիւնաձև ծալուած գունաւոր վարսի եազլուղ ձլգում են ճակատի վրայով և կապում ծոծրակի վրայ։

Յետոյ ձգում են չորշիւ, որ կարմիր, մետաքսեայ, եռանկիւնաձև ծալուած մի կտոր է։ Եւ սրա վրայ կապում են չորս—մի եռանկիւնաձև ծալուած հասարակ կտոր, որ ձգւում է ճակատի վրայ և կապւում ծոծրակի մօտ։

Ապա անց են կացնում իւրաքանչ—մի կարթաւոր շղթայ, որ պահպանում է չալման և չարղաթը։



## Արժեքը.

Բշրղանի . . . . .	15—20	կ.
Յղոլան . . . . .	10—15	"
2 պոչ . . . . .	5—10	"
Սպիտակ մշրղանի . . . . .	15—20	"
Բրեսանոցը . . . . .	1 ր. 60—2 ր.	" " "
Թոփերը . . . . .	4—5 ր.	" " "
Քիթկալը . . . . .	25—30	"
Կոպին . . . . .	10—15	"
Ճլբտանոց . . . . .	40—60	"
Զարղաթը . . . . .	5 ր. 8 ր.	" " "
Զալման . . . . .	20—30	"
Կռերը . . . . .	20 ր. 25 ր.	" " "
	32 ր. 42 ր.	" " "

32 ր. 42 ր. " " "

Ունաման.—Նախ հագնում են գովազայ, և ապա չմոշկ կամ չուստեր:

Սրանից ցիսուն տարի առաջ Թիֆլիսից մուտքէ գործել վրացական տարագը, որ այժմ բաւական տարբերւում է նրանից առաւելապէս իւր պարզութեամբ։ Իւրկազի վրայ հագնում են լէհին, որ սովորական, հասարակ դէյրան է։—իսկ սրա վրայ առաջները քիւլաճա, հանդիսաւոր կամ տօն օրերին քեաթիպա՝ իսկ այժմ հասարակ ժակէտ, որ տեղացիները դուցու են կոչում։

Գլխի յարդարանք.—Մազերը ականջների մօտ ոլորելով՝ այտերի կողքից փոքր ինչ երևացնում են, վերացից մի սպիտակ լաշակ կապում։ գագաթին մի հոռէ դնում, վերացից մի եալուխ ձգելով ծոծրակի մօտ կապում, յետոյ մետաքսեայ եռանկիւնաձև ծալուած մի եաղլախ ձգում են կոպու վրայ, ձախ ծայրը, բկի տակով և ամբողջ կզակը ծածկելով անցկացնում, և կոպու վրայ քորոցով ամրացնում ապա եաղլուխի աջ ծայրը միևնույն կողմից յետ են ծալում և ամրացնում նոյն տեղում։ այնպէս որ եաղլուխի կրկին ծալուած ծայրը քաշէ գալիս ուսի վրայ։

## II. Տղամարդկանց

Սովորական շապիկ և վարտիքի վրայ հանգնում են լայն, շետառ շալուար, որ իռաջանալ կապւում է առաջից կամ կողքից։ Փողքերի ծայրերը դնում են գովազաների մէջ և տոլաղով կապում։ Հալուարը սովորաբար կարում են շալից կամ սև ներկած կտաւից։

Հապկի վրացից հագնում են արիսլուշ, որի կուրծքը առաջները եռանկիւնաձև բաց էր լինում, իսկ այժմ ամբողջովին ծածկուած է։

Արխալուղը կարում են սև կամ կապոյտ ներկած կտաւից։

Նրիսալուղի վրայ հագնում են շտեռ, որ մէջքի մօտ բուզմազով սեղմուելով իջնում է Նսկներից ներքև. Կարում են սև շալից: Ուներին հագնում են քոշեր կամ տրեխներ, Գլխներին ծածկում դժու, որ կարում են գառան մորթից:

Հարուստները ձմեռը հագնում են չուլսի տակից գեր (մուշտակ), գառան մորթից կարած, չուլսի տարազով:

Կտածումի (տատուաժի) սովորութիւնը մինչև հիմայ էլ պահպանուել է Գանձակի գաւառում. այսպէս՝ ձեռքի հարուստներով կամ երկար տրորելով անզգայցնում են մարմնի այն մասը, որ ուզում են կտածել, ինչպէս ձեռքերը, այստերը, ճակատը ևայն, և յետոյ փոշիացած ածուլսի շաղախի կամ թանաքի մէջ թաթախած թելլ անցկացնելով ասեղին՝ անց են կացնում կաշուի միջով. ածուլսը կամ թանաքը թերից անցնում է մարմնին և սև բիծ տախին, որ շատ երկար դիմանում է: Սրան գիւղացիները իւր են ասում, անում են երսին, ձեռքերին, ծծերի վրայ, կրծքին ևայն. բայց սովորաբար մի մի խալ անում են ունքերի մէջ, մի մի հատ էլ աչքերի տակ:

ՀԱՏԱՆԵԿԱՆ ԲԱՐՔ

### ԾՄՈՒՄՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՐՄԱՆԻՔԻ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հասակ. Գանձակի գաւառում ևս աղջիկներին շատ փոքր հասակումն են պսակում և մանաւանդ՝ նշանում: Ուշի տարեկանը արդէն նշանում է, իննը-տաս տարեկանը՝ պսակում: Ես ներկայ եղայ Գետաշէնում մի նշանդրէքի, հարսնացուն հաղիւ ութ տարեկան լինէր. մի կարճ, փոքրիկ աղջիկ էր, որ մարդկանց մէջ չէր երևում: Հայրը զրկեց նրան և կանգնացրեց թաղթի վրայ, որ փոքր ինչ երևայ: Եւ երբ քահանան առաջարկեց աջ ձեռքը մեկնել, որ մատանին դնեն մատը, նա ձախը մեկնեց: Խեղճ աղջիկը ապշած կուչ էր եկել, նրա դէմքը արտայալում էր, որ չի հասկանում, թէ ինչ են անում իւր հետ: Երբ քահանան հարցրեց, թէ համաձայն է ամուսնանալու վեսացու երիտասարդի հետ, նա շարունակեց անշարժ մընալ և կարծես չհասկացաւ էլ հարցը: Եւն ժամանակ քահա-